

Համա լեն կիտե՛ սզոցո՞վ կտրեն. թե՛ ուրա-
խով: Զուր ղես. չուր ղեն. խարսն ուր թախաից
կուկյա տուտս, մեյ ճոչ քար կզանի վեր կրժին՝
կուժ կրլնի քառսուն փշուր, ճժի ծեռ կուկյա
տյուա:

Սաղ կլեղով կթերրուն վեր խարսի խելքին,
կասեն՝—Բարսկնա խելքով խարսին ի՛նչ անենք,
որ ինոր ստեր կլետին շառնի:

Կլեղ-կլեղովի, ուսն էլ խետներ կրմեղեն,
կրմեղեն, ճար կրկնղենն, կրպիտն հառից մեյ
չվան կրկախեն, ցածրի ծեր կանեն օգակ կրթա-
լեն խարսի վիյ, խարսի ոտեր կլետնից կրկ-
տրվի: Կախուկ խարս կլրթա-կուկյա, ուրանք
պոնդ կրպոնեն խարսի պուլոր, կխաղան, խետն
էլ խաղ կասեն:

Խարսն, կուրբան քյո խելքին,

կուրբան կակոզ քյո քելքին:

ԽԱԿԼԻՄ-ԽԱԿԼԱՎԻԾ

Կրլնեն, չեն ըլնե, մեյ քյոռ խալիվոր, ուր
բաղրդղյան յաճ, էնս՝ ուր խարս: Լաճ կլրթա
բաղրդղյանութեն, կմնան քյոռ կեսեր, Լնան
խարս: Խարս կասի՝—արե խոր րսկուն անեմ,
թո շոա մեռնի: Լեսածու օր՝ տալ թան կաանի-
կանի կեպիտի առան, կուտի՝—Թան-թանանա,
պապիյն ուտի՝ դվարթանա:

Զինք էլ ուր խամար նամիկ կթալի վեր
թորվան՝ խավիծ կիլի, խետն էլ կրղնղնա՝—խա-
վիծ-խավիվիծ, տապիյն ուտի՝ ինի ստից:

Պապիյն աղորթմանց օր-ավուր կուղում կու-
տոր կրլնի, համա խարսն էլ կրսարսամնա:

Բաղրդղյան կուկյա ուտն, կրախնա խեր
ծեռ-ստից ինչյուկ, կնիկ՝ սարսամցուկ: Հեքիմ
կպիրի վրեյթեր: Հեքիմ կուտի.—էսա խալիվորն
դավ չկա, պյան շուտեղուդ կաղսմն ի կուտե.
կուշա-կուշա կերրցուցեր՝ կրլնի վեր ոաաց:
Համա էսր խարսի ցավ պոն ի, տաք եղրղեն շատ
ի կրլե, եղ թոն խոր կաֆեն, դյո ի տոնե. չուր
օր մախու րտրսկնա սարսամ պիտի մնա:

ԱՆՆՈՒՆԱՐ ԱՂԶԵԿԱՆ ԲԱՆՏ

Մեկ անխունար աղչիկ կրլնի, որ տուչկան
մանել րիյա ծեռնից չի կյա: Համա էսր աղչկան
մեր հմեն տեղ ուր աղչկան կրկյովա, կասի.—Իմ
աղչիկ անթիկա րսո կյոռծել կիտի:

ՈՐԱՄՏՈՒԹՅՈՒՆ

Հայտնի չէր, թե երվանից կամ ինչու վանե-
ցիներ արձակցիներին հորջորջում էին Բարխու-

Մեկ օր էլ զատու տեղից ազոզ կուկյան. մեր
կառնի ուզղներաց կնտրցուցի խաց-բքյումի:
Աղչիկ կուկյա վեր էրտըսին կյուխ կկախի ցած,
կրոռա.—Մարե, ի՛նչ նըխշ տենս վեր խալուն:

Մերն էլ կտխնա, որ էտր մարթեր աղան:
կանեն, բրթերեն չույար կուտա կասի.—Կիլի-
ֆար, դաստե օալվար. զոյին հրսար. քոռիկ յը-
րար:

Ուզղներ էտր պյան որ կրլսեն, ուրանք-
ուրանք: կասեն՝ մեր ուզած խարսնացուն էսա ի.
որ կա:

Անխունար աղչկան կտանեն, խարսնիս կա-
նեն-կպրծնեն, կրպիտն մեյ խատ խալի կրի-
նեն, յոթ ոանզյի թելերաց կաժ կուտան ծեռ, կա-
սեն՝—Դե, մեր տան խամար էլ քյու մոր ասած
խալուց կյոռծի:

Անխունար աղչիկ կասի.—Տուռ փակեր վրես,
խաց-ճուր էրտրսից թալեր տակ, որ ոչ մեյ մարթ
իմ արած շտխնա:

Ըարսկնա էլ կանեն: Անխունար աղչիկ էտր
փակ տրոան իտեվ, էրտրսից թալած ուտեկեղեն
կուտի, կրխմի, կրպառկի՝ կքրնի:

էն մեկ օր էլ կեր կուտի, միջի ուսկոռ կան-
թուկի տոան իտեվ, ուսկոռ կլրթա կտիպնի սա-
տանի ճրժի վղի վրավի խոցին: Խոց կծակվի,
տրուն-թարախ կթալի տյուս, սատանի ճիժ կա-
ղենա: Սատաներ չորս թարաֆեն կուկյան կրժոդ-
վրոավեն վեր իսոր կյխուն, կասեն.—Տյու մեր
ճժին ցավից աղատիցիր, մկա ասա քյու ուզելիքն
ինչ ի, որ քյու հախ տանք:

Աղչիկ կասի.— Ախպեր, դատ չեմ ուղե, մե-
նայ թե էսր խալին, րսրսկնա-րսրսկնա կյոռ-
ծեք, տվեր իմ ծեռ:

է, սաաանեյթերաց խամար ի՛նչ կա որ, էն
սհաթին իսուին կկոռծեն-կուտան անխունար
աղչկան ծեռ, էտր էլ կթալի վեր թիվին, կրլնի
տյուս:

Կեսրանց տան ճոչ-պսաիկ կլմաղվրոավեն
վեր կյխուն, կիրիչկան խալուն՝ կրթերուն,
չունքի վրավու նըխշեր կեսն սատանալական կրլ-
նեն, կեսր՝ հիսանի: Իսոր խամար էլ խառն-
խրշտիկ կրլնեն: Զուր օրոս էլ մեյ-մեկու կասեն.
—Վով կիաի, տյու անխունար աղչկան րախտի
տեր հիսան ես, յան թե կասեն.—Քյու հաշիվ՝
անխունար աղչկան խալու նըխշերաց տես խառն-
խշտիկ ի:

ՕՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

դար մականունով, որ հավասար էր տարօրինա-
կություններով լի, ծույլ ու ապաշնորհ հասկա-
ցությանը:

Արձակացոց Բարխուդար ծաղրանունը գործածել էր անգամ հրիմյան Հայրիկը: Սակայն արձակցին երբեք չէր պարփակվել ամոթխած շինականի դերում: Նա իր արժանապատվությունը րարձր էր պահում առաջինը՝ իր քրաց դռնովը և ապա՝ իր «փշոտությունը» նա ոչ մեկի, ինչ դիրքի մարգ էլ լինեք, թույլ չէր տա իր անձի նկատմամբ արհամարհանք ցուցաբերելիս և դա ոչ թե ֆիզիկական ուժի գործադրություն, այլ իր սուր լեզվով:

—Ասպած լեզու ի տվե, թե մարթ ես՝ տիմացինիտ լեզվով հախթե, թե չէ լյանգեն՝ անօրենն էլ ունիս—սա արձակցու հավատամքն էր: Իսկապես էլ, պեաք եղած ժամանակ արձակցի ամենարարխուդարն էլ կարող էր որևէ սրամտությամբ փակել իրեն ծաղրողի բերանը:

1895 թվականին արձակցի Բարխուդարենց ընտանիքի գավակ, իրականում խիստ սահմանափակ ունակությունների տեր ծերունի Ավագը վան է գնում և իջևանում իրենց վաղեմի ծանոթ Կարա-Սեֆերյանների սանը: Հյուրընկալների տանը այդ օրը ինչ-որ ուրախ առիթով հավաքույթ է լինում, Մրսաֆր խանայում (հյուրասենյակում), ուր մտնում է Ավագը, շարքով նստած են լինում քաղաքացի մեծատոհմիկ տարեց մտրդիկ:

Նկատելով ծերունի դեղշուկի ամաչկոտ կրծկրվածությունը, բանիմաց աղաների խելքին փշում է հարկադրել նրան երգել: Կարա-Սեֆերյանը տեղյակ էր, որ հին ծանոթը երգելու շնորհ չունի, սակայն անճարակ արճուկցիով ղվարճանալու հյուրերի ցանկությանը ընդառաջելով, ինքը ևս միանում է նրանց ու Ավագին խնդրում, որ վերջինս իր խաթրը չկոտրի:

Ավագը կոհհեղով քաղաքացի աղաների ցանկությունը՝ իրեն ծիծաղելի կացություն մեծ պնելու, վճռում է պատասխանել յուրովի:

—Քավոր աղա,—դիմում է նա անտիրոջը, —ես մենակ կյութան քշելու տաղ կիտեմ, էն էլ րստեղ տեղը չի:

—Շատ տղեկ էլ տեղն ի: Տյու էլ կյութան քշելու տաղ ասա,—համաձայնում է անտերը:

—Ախրը խարեղան էլ չկա,—կմկմում է Ավագը: Հյուրերից մեկը իր թաշկինակը ոլորում է, մի ծայրին մի հտնդույց է անում, մյուս ծայրին կապում է իր երկար ծխափողը և մեկնում է Ավագին ասելով՝—էսա էլ քյե խաբեղան:

Ավագը տնտղում է խարեղանը և նորից է գիմում տանտիրոջը:—Քյավոր աղա, լծկայնթեր, խո խամ չե՞ն, բիրգան չխրոանե՞ն,

—Չէ, չէ,—հավաստեցնում է անտերը, առանց ըմբռնելու Ավագի մտադրությունը:

Ավագը կանգնում է ծալապատիկ նստած հյուրերի մեջանդում, բարձրացնում է խարեգանը՝ գլխավերելու և սկսում է եղսնակել՝

—Հո՛, հո՛, հո՛, հոռովել, հո՛, հո՛, հո՛, մեռնեմ ես իմ կայիմ լծկայնթերաց, հո՛, հո՛, հո՛, ...և խարեղանով աջ ու ձախ շփացնում է ծալապատիկ նստածների՝ որի վղին, որի գլխին, միաժամանակ շարունակելով իր հորովելը:

Նստածները անսպասելի հարվածներից,—Մո՛, ծո՛, խայ, էտա ի՞նչ ի կանես,—կանչելով վեր են թռչում, իսկ Ավագը հանգիստ դիմում է սանտիրոջը:

—Քյավոր աղա, ապա տյու ասիցիր լծկայնթեր խամ չեն, վալլահի, խամ են, էն էլ ինչը՞ իսամ, քյու պարի աչկով սիսար, բիթունն էլ խրոտան, բիլահի, մեկն էլ րսկի լծի տակ չէր ինդե:

Ավագին տարեկից, ընավորությամբ խիստ դյուրարորոք, իր ողջ էությունը իսլամատյայ Դղոյի Պիտրոսին ձկոնախ է գալիս մի տարեց թուրք պաշտոնյա: Այն պահին, երբ ձկոնախը իր առաջ դրած ձվածեղն էր ուտում, տան կատուն մուկը ըռնած բերանին ներս է մտնում:

—Ավսհարի (տանտեր),—քրքում է ձկոնախը,—էս ինչ թարրիալի (գոստիարտկված) կատու ունես, տես է, քեղ համար ինչ թիքյա բերեց:

Պիտոն ձեռքը սրտին դրած, դուխր հարգալից խոնարհելով ասում է,—Աֆսնդի, էսը շապաթ մեր Ասպարաժնա պաղսն ի, մեր ծծկեր ճրծին բիլա մենք միս չենք իտա: Կաաուն քյե խամար ի պիրե, վերու անուշ պրա:

Հյուրը լռում է:

Տեր-Կարապետենց Հովակիմը, թեպետ հարուստ և մեծատոհմիկ տան ղավակ, սակայն ընավորությամբ խղճուկ ու անճարակ, ամբողջ կյանքը անցկացրած լինելով սեփական ոչխարների հովվություն անելով, ոչ միայն գյուղի իշխանավորների հետ շփում չէր ունեցել, այլ իր մեծ եղբայրներից անգամ քաշվել էր: Արախոսությունը նրան անծանոթ էր եղել: Անձրեոտ մի երեկո, թրջված ու հոգնած աուն մտնելիս, տանը նստած տեսնում է երկու ուսադիրավոր սպա: Բարեն աստծուն է իր պարզունակ համոզմունքով նա կոնախներին ուղղում է:

Սպաններից մեկը, որ րստ երևույթին կատտ-

կասեր և լինում, Հովակիմի հետ խոսքի է բռն-
վում:

— Զր, աղսախկալ (սպիտակամորուք). — ա-
սում է նա, — աշխարհ ման եկած մարդ ես երևում.
պատմիր տեսնենք ման եկածդ աշխարհներում
ինչ կա, ինչ չկա: Պատմիր մենք էլ իմանանք:

Ձգալով, որ իրենց սան հավով փլավով
կշառցած թուրք իր՝ հայի շարքաշ կյանքն ու
աշխարհից տնտեսական լինելն է ծաղրի ենթա-
կում, յուր զեմը բնորոշելով, պատասխանում է.

— Աֆանգիս, դորու տիգիր, Լիկենյա (բավա-
կանին) աշխրբներ կան իկեր եմ, շատ-շատ
բաղբներ եմ տիսել:

— Իե, տեսածդ աշխարհների մասին մի բիշ
պատմիր, մենք էլ զնանք ուրիշներին պատմենք.
— համառում է երիտասարդ սպան, այնքան էլ
համոզված չլինելով, թե հայ տարիքավոր ղյու-
ղացին կտրոզ է որեւէ հետաքրքիր նորություն
պատմելու:

— Աֆանգուս ասեմ, — սկսում է Հովակիմը,
կոշտացած մառնեք մեկ մեկ ծալելով, — Հազ-
թտն, Կրկրյան, Գլենձան՝ պերք-պարով աշխր-
ներ են, համա շատ են զոտու, ինչ եմ տես
մոտու Ջյոթյանու բյաղրին, Չնձնու բյաղրին,
Պալ Գյուլա բյաղրին՝ պերք-պարին շուրի բողա-
ղրի Լապոս շեն պոխի, ո՞րն ասեմ, ո՞րն թողնեմ:

— Աղսախկալ, բո տաած անպերք մեր մամու-
րյաթի (հայրենիքի) մե՞ք են, — միջամտում է
երկրորդ սպան:

— Հայրաթ բյի, մեր մամուրյաթի մեք, աֆան-
գիներս, ուրիշ կալների (տերությունների) սնոր
ոս չեմ տրե, — պատասխանում է Հովակիմը:

Եվ մինչ երկրորդ սպան ուշադրությունը լա-
րած հետևում է Հովակիմի թվարկած ժաշխարհ-
ների ու բաղրների՝ նկարագրման շարունակու-
թյանը, ասուցին սպան երկու ձեռքերի շոած
մատները զեմրին սեղմելով, մոթմոթում է. — Իսկ
ես էլ այն համոզմունքն եմ ունեցել, թե Ստամ-
բուլի Լապոս մայթարին մեք աշխարհագրություն
են սովորեցրել:

Հավակիմի թվարկած աշխարհները, որ նա
որաստանել էր կիսուս, մոտակա լեռներն էին,
իսկ բաղրները՝ գյուղին մոտիկ արոտավայրերը:
Քիչ հետո «կոնստանդուպոլիս» գյուղից մեկնել
էին, համառացած՝ հայ հովիթ լսած երկրների
ու բաղրների գոյությունը:

— Թո էրթան, ես իտոնց մասար... — գոհու-
նակությամբ իր ձեռքերն էր շփել Հովակիմը,
— էտու զեն էլ թո աղսախկալներաց վրեն չծրծ-
պան:

Այս երեք օրինակը բերեցի արձակցի ներից
բայց նորերը այդ խնդրում իրենց պապերից ու
հայրերից պակաս չէին: Ես իր անդում ելել եմ.
որ Արձակի աղբյուրի մասին ղյուլց կար. թե ղա
սիրո, սիրահարվելու աղբյուր է:

Փոքրիկ աղջնակ էի: Աստվածածնա տոնի
նախօրեին, մեր տուն էր եկել Վանի Կյուր ասար
թաղամասի բնակչուհի՝ Մարինոս խաթունը, հիս-
նամյա մի հարգեղոր քաղաքացուհի: Տեղ հաս-
նելուց մեկ ժամ անց, նկատելով, որ ես աղբյուր
եմ ղնում, ինքը ես ցանկություն հայտնեց ղալ:
Նախատոնական եռուն օրվա մայրամուս
էր: Աղբյուրում երեք կին կային, որոնք կժերը
լցրած պատրաստվում էին վերադառնալ:

— Էսա սխալի մոտն ի՞, որ ժեր կյեղի լա՛-
վախչիկ սիրու կրտիրանան, — բնդանություն ղի-
ւից մեր հյուրը բժիժագով:

Մինչ կանանցից երկուսը, տարօրինակ հար-
ցից ղարմացած նայում էին, երրորդը հանդիսա
ու լուրջ պատասխանեց.

— Հա, խաթուն, ղյո մենակ բստեղն ի, որ
մեր կյեղի լա՛վաղչիկ մեյ-մեկ կտիսնան, մեյ-
մեկ կրճանչնան, խոսկ կուտան, խոսկ կառնեն:

Աղբերս լայն րացած լսում էի այս նոր հայտ-
նությունը, իսկ արձակցի Կրծոյի Մարանը սկսեց
նկարագրել ինչպես մեկ ժամ առաջ՝ մի ղուլց
հասուն տղա ե աղջիկ եկել էին ե սիրահարվել
էին: — Մեր իրեքի աչկի առա՛ջ սիրուտերցան, մեյ-
մեկու կյրկիցին, նշանվան, ես կնացին, էսը շափ-
թուն էլ կրիսալվեն:

— Ափսոս, որ ես չրտիսա, — տրամեց Մարինոս
խաթունը, — էս օրեր ուրիշ սիրուտերացոջ չի՞
լինել, կյամ սիսնամ:

— Զլ, խաթուն, բս տուրի էլ սիրուտերացու
լա՛վաղչիկ ղկան, — եղավ պատասխանը:

Տուն գալով, մեր հյուրը խոր ափսոսանք
հայտնեց, որ ղրկվել էր Արձակու աղբյուրի վրա
կառարված նշանդրերը տեսնելուց ե իր հերթին
ենթարկվեց ծաղրի՝ նման տնհեթեթության համա-
րածայելու համար:

— Ընչի՞, ես խո բոո շարխոջ ղի՞, որ ղրկ րտու-
կես սութ-սութ պաներ առաց. — սկսեց արդարա-
նայ Մարինոս խաթունը, — սե խակյածն էլ բսկուն
խաթուն-մաթուն կնիկրմ կերեվարու Լաման, էսա
Լոնձակ ի՞նչ նմուշ անղ ի, խելացուն կրծորցնեն:
Ինչկյանղար տեղյանք եմ կան իկե, բսրսկնա
պանի ոսսո ղի իկե: Ես վաղն ին՝ շի էրթամ Լա-
պարածին, սաղ կյեղ պիաի ձիկ անեն ծոու տեղ:

1913 թվականին, մի անղամ Վանի ղուկայում

կանգնած է լինում Արձակի ժամհարի պառավ, տգեղ ու անասելի թափփված ղուստը՝ Սալաթը, որն աչքի էր ընկնում իր սրտխոսոթյամբ: Նրա կողքով անցնում է մի մաքուր հագնված վանեցի՝ Վերջինս երեսում է անծանոթների ծաղրելու վարպետ է լինում: Նա խոր հարգանքով, ձեռքը ձակատին առնելով րացականում է,—*հաղար՛, խալա՛ր* պարով, իմ կարոտ մորթոն:

Սալաթը անմիջապես ընկնում է նրա թևից.—*Աման, քյուրոշ լաճ, իմ իրիկ կուրիսեր ի, մխադալալ կանչի:*

Դալալ, այսինքն մունեաիկ սովորաբար լինում էին ընդունված աննշան ու մեծավ մասամբ աղքատ մարդիկ՝ Վանեցիներս երեսվորին շաա կատակարան է լինում, նա մի ձեռքով ընկնում է Նալաթի թևի, մյուսով օդի մեջ է պտտեցնում իր թաշկինակը և մունեաիկներին հառուկ ձայնով սկսում է կանչել,—*Հե՛յ, շաղամաթ, խալ, աճիկ, քյուրթ, ասորի, նասրանի, էս կրնգան իրիկ կուրիսեր ի, վով կրնդեր ի, թո սլիրի աա, էսա ալնուխ կրնգընելա (գտնելու վարձ)...* Կանչը կրկնում է երեք անգամ: Ձայնի վրա հավաքվում է պարասպ հետաքրքրասերների մի սավար խումբ, այդ ժամանակ Սալաթը վերցնում է վանեցու գլխի ֆեսը և շարտելով րազմության մեջ ձայնում է,—*իմ քյուրոշ լաճու ֆասն էլ կուտանք կրնգընելա, ֆասն էլ...*

Հտնկարծակիի եկած վանեցիներաց է թողնում Սալաթի թևը և կռանալով հավաքվածների ռաքերի տակ, պոռում է.—*Մո, յսմա՛ն, իմ ֆաս, յամա՛ն, իմ ֆաս, թաղա եմ ավե կալրի, չկոխկրրճեթյ, ծո մարթ էլ շինայնու խետ խանաթյ կանի, որ ես արիցի...*

Վարչականորեն Վան-Տոսպի կազմում էր գտնվում Վանին շաա մոտիկ ընկած, այգեշաա Շահրաղի գյուղը, որը ոչնչով չէր տարբերվում Վանից:

Շահրաղի, Ավանց, Աեկյա, Արտամետ գյուղերը Վան-Տոսպի հնատարաղ ու հեաամնաց աղգարնակչություն ունեցող րազմաթիվ հայկական գյուղերի հակապատկերն էին: Սակայն արձակցի, հիշյալ գյուղերից կապի մեջ էին Շահրաղի հետ:

Շահրաղցիները, իջարեոերով խաղող էին տանում Արձակ՝ փոխանակում հացահատիկով: Գինեառատ Շահրաղի գյուղից էին գնում արձակցիները իրենց գինին: Շահրաղի մոտովն էր անցնում այն լայն ուղին, որով արձակցիները Վան էին գնում: Ու հաղվագեպ չէին լինում ձմեռային

այնպիսի երեկոներ, որ արձակցիները ձանապարհը կարճելու ստիպմունքով գիշերեն Նահրաղիում: Մի քանի արձակցի և շահրաղցի խնամիացած էին: Բայց և այնպես արձակցիների համեմատությամբ՝ շահրաղցիները թե՛ իրենց նիստուկտցով, թե՛ ընակարանային սարքուկարգով շատ էին քաղաքացիացած: «Փշոտ» արձակցին չէր կարող հարգել շահագետ շահրաղցուն և միշտ մի առիթ որոնում էր շահրաղցու «քաղաքացիություն» ծաղրելու համար:

Հարյուրավոր գեղքերից բերեմ մի երկուսը:

1914 թ. փետրվարին արձակցի երկու երիտասարդ եղբայրներ՝ Ֆրանգյուլի Դեոնդն ու Մովսեսը գնում են Շահրաղի՝ գինի բերելու: Ըստ աիրող սովորության, գնվելիք գինու կանխավճարը արգեն տրված էր եղել:

—Գասպար աղտյին կանչիր, մենք եկել ենք մեր գինին տանելու,—հայտնում են նրանք շեմքին կանգնած տանտիկնոջը, որը գնորդներին ներս հրավիրելու փոխարեն, գլխով ցույց է տալիս ախոռը:

1896-ի կոտորածին լրիվ որրացած, լրիվ թալանված, սակայն արգեն տնտեսությունները վերականգնված եղբայրներին, որոնցից մեկը մի պարզ գեղջուկ է, մյուսը՝ վարագի որրանոցն ավարտած գյուղական ուսուցիչ, և սակայն իրենց ախոռում ունեին տասը անասուն, զարմանք է պատճառում, որ շահրաղցու ախոռում կա ընգամենը մի կով, մի հորթ ու մի գետնատարած էջ:

Ֆեսավոր Գասպար աղան զպղծ իշու առաջ, զղնձյա հին ափսեով զարին մոտեցնում է սաակող իշու ղնչին և ոչ մի ուշադրություն չի զարձնում եկողների վրա: Նկամտաբեր սլզու ու երկհարկանի տան տեր քաղաքատիպ շահրաղցու մի էջի համար այգպես վշտահարվելը՝ ըուոն ծիծաղ է առաջացնում մշաուրախ եղբայրների մոտ:

Վշտակցի ախուր տեսք ընդունելով, նրանք ընկնում են իշաաիրոջ թնվերից,—*Կյաղպար աղա, րտրսկրնտ մի՛ անե, խոկյասուաոց կանես, մեգթյ ի,—ասում է ավագ եղբայրը, իսկ փոքրը լրացնում է,—Տյու խաց խալսլ ասա, մենք էլ մեր խուկյու խամար շարական ասենք:*

Պզղում են հրաշալի ձայն ունեցող երիտասարդները՝ գեանաաարած էջի գլխավերեն ու ոանաակը, մեկը ընկնում է էջի պոչը, մյուսը՝ ականջը և սկսում են փոխ առ փոխ երգել՝ Կովկասից Արձակ հասած «Սաակած իշու» մասին երգիծական ողոր՝ յգրիսաավ, գուրերնաաոռ, մալական և

այլ խոսքերը փոխարինելով Վանի մեծահարուստների ազգանվամբ ու ավելի ճոխացնելով կատակերգը.

—Ջիդաշուն փաթուղացու լաւեղ սև կաշուտ մեռնեմ, իշո քան, չոշո քան.

Նահրապու ուս խատներ, տյու շմեռնիր, չոշո քան...

—Թյութունչու տան լաւեղ՝ չալի կաւլ ակընչ-նեւրացրաւ մեռնեմ, իշո քան, չոշո քան.

Նահրապու տիրացուն խատներ, տյու շմեռնիր, չոշո քան...

—Կափամաջու տան դավաթին՝ տաղ ասելուն լաւեղ բյու գնդուն ծնենին մեռնեմ, իշո քան, չոշո քան.

Վանա բլաղբից բառսուն զանգին աղա թո խատներին, տյու շմեռնիր, չոշո քան...

—Հյուսայտի թափու փոթիլըներայ պես կրտկարուն բյու էրկու ջուխա ոտերեաց մեռնեմ, իշո քան, չոշո քան.

Վանա բլաղբից բառսուն զուրնդար թո խատներին, տյու շմեռնիր, չոշո քան...

—Մեկխտնացու ֆասի պուխ պոչիա մեռնեմ, իշո քան, չոշո քան.

Կյեզի կյզիթ թո խատներ, տյու շմեռնիր, իշո քան, չոշո քան...

—Բոշունց սուս խացի տաշտի պես տառտակ բյու փորին մեռնեմ, իշո քան, չոշո քան.

Կյեզի ուս-մաջիթ թո խատներին, տյու շմեռնիր, իշո քան, չոշո քան...

—Մրկալա տիկ լոզոյ կյինու պես պղտոր, անկրակ բյու աշկերաց մեռնեմ, իշո քան, չոշո քան.

Էար կյինուն բեղ ավոզ առճակցի ջուխտ-ջուխտ տխպերներ թո խատներին, տյու շմեռնիր, իշո քան, չոշո քան...

Սինչ այս, մինչ այն, էշն արդեն ոտակել էր.

—Դե, Կյազպուր աղա, ուզել-սլակաս պաշխի, — գիմում է Ղեռնպր գինեգործին, — էշն ինչ ի, որ իշու խամուր ախրես, իլի վեր, մեր կինիններ չափի՝ տուր կյնանք.

—Է, պղտոր կյինի, խին տիկ, դատու ճամբախ. չուր մեր կյեզ խասներ, մենք էլ էսր ողորմածի օրին կիններք. — կառակում է Մոզսեսը.

Մտնելով գինու նկուղը, գինեգործը դուռ էլ տալիս գինու կիսատ կարասը, սրից, բա պայմանի, եղբայրներին գինի էր սուլու, ապա բազ է տնում մի փարթիկ կարասի բերան.

—Առճակցի.— ասում է նա, — ասպած ծե բուրսկնա ուրախ պախի, էսա կարաս իմ ասն խամար եմ պախի, տյուր էլ էսա կարսի կյինուդ

խմեր. գնա կասեմ՝ ասպած ծե հյա բաշ-կնա պախի:

Ասաված Ֆրանգուլյան եղբայրներին հուրախ պաշեց նրանով. որ հեց թուրքական բանակ՝ անվերադարձ... Իսկ երեքը՝ մեծ եղբոր, մեկը՝ փոքր եղբոր մանկիկները, իրենց փախ մայրերի և պառավ տատի հետ... Շալվեցին 15-ի հղեռնին, այնպես որ Ֆրանգուլյան Աարգսի տոմար մոտացվեց:

• • •

Օժիտի հրապուրանքով աղջիկներին ամուսնացնելու ամենուրեք տարածված կանոնը իշխում էր նաև Վանում, դրա համար չլի շատ չքավոր վանեղիներ, ստիպված էին իրենց աղջիկներին ամուսնացնել ղյուղացի երիտասարդների հետ. որոնց մեջ զեռ պահպանվում էր դալանի սովորությունը. Այդ առումով, եթե հաջվելու լինենք, Վանի դավառում զծվար թեղտներ մի այլ գյուղ, ուր Արձակի չափ քաղաքից բերված հարսներ լինեին. սկսած մեծ գերդաստանի մամիկներ զարձածներից, մինչև Վանի վերջին նորածնությունը ուղևորված նորահարսները:

Չնայած նման գերդաստանների երկու կողմը ևս միմյանց հանդիպ սեր ու հարգանք էր դուրս բերում, այնուամենայնիվ՝ ղյուղի և քաղաքի հասկացողության տարբերությունը չէր փոխվում:

Վանեցին, լինելով բաղձաձիքը արհեստավոր, թե հաշվենկատ առետրական, միևնույն է, իր հողու խորքում չէր կարող արդարացնել ղյուղացու անփութ Վերարբությունը ղյուղատնտեսությունից սասուցած բարբոսների նկատմամբ, այն էլ այն դեպքում, երբ դրամի նեղություն էր կրում: Իրանով, ամենահարգված ղյուղացի խնամին բազարացի խնամու համար «չլիթ-թլիթ», անմաժմունք» մարդու սահմանից ալն կողմ չէր անցնում:

Առճակցին, այս առումով, բաղառություն չափտի ներկայացնել, եթե նա Բարվի հետ կառ լուսննար: Որոշ չափով ծանոթ լինելով կովկասյան բաղարների հայերի նիստուկացին, արճակցին, արդարացում չէր գտնում ինքնազրկողության գնով դրամ կուտակելուն: Հենց դրա համար էլ տասնյակներով «բեթ» կալիբներն հենց խնամիների ներկայությամբ, շնչառելով բաղարացու առօրյայում տեղ գտած ծիծաղելիության հտանող խնայողությունը:

Նման անեկդոտներից հիշենք երեքը:

Ա) Քաղաքացի տարեց տանտիկինը ջրուր էր եփելու (ձվջուր՝ ջրալի կերակրատեսակ), Երկար մտածելուց հետո նա որոշում է ջրուրի մեջ

ջարդիլ երեք ձու, սակայն երեք ձվից մեկը՝ մի կողմի վրա է դնում. «էրկու ծու կոտրեմ, խերիք ի», մտածում է տանտիկինը: Կոտրում է առաջին ձուն, կոտրում է և երկրորդը, բայց երրորդի միայն սպիտակուցն է դատարկում օրվա ճաշի մեջ, իսկ դեղնուցը ետ է տանում հաջորդ օրը եփվելիք ջրուրի համար:

Բ) Զարգարված հարս ու սկեսուր վերադառնում են եկեղեցուց:

—Ախշի, էտա ի՞նչ ուլնիկ ի մեկ խողերաց ինդուկ,—հարցնում է սկեսուրը, մատնացույց անելով փողոցի հողերի մեջ ընկած ինչ-որ կլոր բան:—Ավատա անծակ ի, թալ քու ջոր, ես վաղ ասողով յավաշ-յավաշ ծակ կը պայանամ:

—Ուլնիկ չի, խաթուն, պըտըսուր ի,—հայտնում է հարսը:

—Պըարտո՞ւր ի, վերու տու կապեմ իմ յաղմի ճոթ, սանեմ վաղ թալեմ թոներ,—ողևորված կարգադրում է սկեսուրը:

Դ) Գյուղացի սանահները դնացել էր քաղա-

քացի քավորի տուն: Ծաշից առաջ, տանտերը ասաց,—Սանախեր, արե մեյ դոր իկյին կան կյանք:

Այդում նա բոնեց թթու սալորի ծառի մի ճյուղ:

—Սանախեր, էսա ալուշեն իշտախ պյանալու խամար մեյ խատ ի:

Ասնահերը ամբողջ ճյուղը մաքրապարզեց, ծաշի ժամանակ, միշտ բաց ախորժակի տեր սանահները, էլ ավելի բաց ախորժակով սկսեց հաց ուտել:

—Քյա տղա, ճոշ աղա,—դիմել էր հյուրընկալի մայրը որդուն,—էսա մեր սանախոր ընչի՞ ալուշով չպատվիցիր:

—Պապեց, քյավորմեր խաթուն, պատվեց, պատվելու գյորա էլ կիրա, համա մեյ թարաֆի ասըմներով,—քմծիծաղեց սանահները:

—Տյու մեյ թարաֆեն ես կիրե, ամա մեկրկու թարաֆեն դարար խասուցիր,—փնթփնթաց քավորը:

Բ Ե Յ Թ

Արձակցիներին թե՛ վանեցիները, թե՛ շրջապատի դուղացիները՝ «րեթչի առձակցի» էին որակել, և այդ որակումը ճշմարտացի էր: Բեյթով խոսելու ձիւքը և՛ հներն էին ունեցել, և՛ նորերն ունեին: Արձակցի Ալոյի Մարտիրոսը այնքան շատ էր օգաադործել իր այդ ձիւքը, որ նրա մահից հետո էլ ասում էին.

—Ի՞նչ ի, հո Առձակու Ալոյի Մարտիրոս չեմ, որ բեյթով խոսեմ:

—Բեթչի մեք ասե, Ալոյի Մարտիրոս ասեք, որակում էին որե՛ք բեյթով խոսողի:

Ալոյի Մարտիրոսի նման բեյթ ասելում վարպետացածի համարվ վայելող արձակցի Տավկե Արթենը մեկ անգամ իր հարեանի հետ Շահրադի էր դնացել: Շահրադիում լինում է ինչ-որ հոշակ ված բեյթչի և շահրադցի մի խումբ տաղիքավորներ երկու բեյթչիներին նստեցնում են իրար դիմաց մրցելու, պայման դնելով, որ ոչ մի կողմը իր հանդեպ վիրավորանք չհամարի անգամ հայհոյանք, միայն թե ասվելիքը լինի հանդավորված:

Բավական ժամանակ իրար հետ հանդավոր ընդդիմախոսելուց հետո Տավկե Արթենը իրեն պարաված է ձեացնում. նա սկսում է իր արեխների կասկերը ամրացնելով մրմըջալ.

Ախպեր, շարխըներ կրքեմ, բստեղից էրթամ,

Քյանի շաղրադըցին չի տարե իմ պերնի խամ:

Ես Առձակու խասա Շաղրադի,

Որ իսոր աղեկըմ դադի:

Ես քյանի բեթ պիրիցի՝ էսա բեթ պիրեց վեր իմ բեթին:

Եվ Արթենը հանդավոր հայհոյանքով ավարտում է խոսքը: Անակնկալի եկած շահրադցու դարմանքը տեսնելով, Արթենը հանդիստ հարցնում է.

Շաղրադցի բեթչի,

Թե ասածս քիչ ի

Տյու էլ՝ քյու դուտենն փչի:

—Տէ՛ ախպեր, չէ, ես տտըվուկ եմ, իներիք ի,—պատասխանում է շահրադցի ընդդիմախոսը, —իմ կողմանե խերն անիծվի էն մարթուն, վուլ առձակցու խետ բեթի կը պոնվի:

Արթենի ավագ որդին՝ 20-ամյա Դավիթը իր կաաակարանությամբ, մանավանդ հանդավոր խոսելու ունակությամբ, բեյթներին սիրելին էր: Պետք եղած դեպքում նա հոր հեա ես հանդավոր էր խոսում: 1913 թ. ձմռանը նա որոշում է այցի գնալ Վանին մոտիկ Շուշանց գյուղում գտնվող աղդակաճերին: Նրա գնալուց հետո ծնողները նկատում են, որ դրսի մառանում եղած սերմացու դարու կեսը հագիվ է մնացել: Առաջին դեպքը չէր, որ Դավիթի ձեռքով մառանից որե՛ք մթերք էր անհետանում, և հայրը մի քանի հայհոյանք տալով սահմանափակվում էր: